ԱՎԱՆԴՈՒՅԹ

ՄԱՅԻՍԻ 25-ԻՆ ԿԿԱՅԱՆԱ ՍԱՅԱԹՆՈՎՅԱՆ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ 100-ՐԴ ՎԱՐԴԱՏՈՆԸ

Կիրակի՝ մայիսի 25-ին, ժամը 13-ին Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցու բակում, ծաղիկներով Սայաթ-Նովայի շիրիմի զարդարմամբ կսկսվի Մեծն Աշուղին նվիրված հոբելյանական 100-րդ Վարդատոնը:

Ապա Վախթանգ Գորգասալու անվան հրապարակում, Սայաթ-Նովայի հուշարձանի մոտ կանցկացվի տոնին նվիրված մշակութային հանդիսավոր միջոցառումը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՅԻՍ

29.05.2014. Հիսուս Քրիստոսի Համբարձման տոն

Տոնը նշվում է Քրիստոսի Հարության 40-րդ օրը, 35 օրվա շարժունակությամբ՝ ապրիլի 30-ից մինչեւ հունիսի 3-ը՝ հինգշաբթի: Հարությունից հետո Քրիստոս 40 օր մնում է երկրի վրա եւ երեւում Իր աշակերտներին: Այդ ընթացքում Հիսուս Իր վարդապետությունն ուսուցանում էր նրանց, իսկ վերջին հանդիպման ժամանակ օրհնում ու պատգամներ էր տալիս առաքյալներին, որից հետո համբարձվում երկինք:

Քրիստոսի Համբարձման տոնն ուղեկցվում է նաեւ ժողովրդական հանդիսություններով եւ կոչվում է Ջանգյուլում (գյուլ՝ նշանակում է վարդ, ծաղիկ):

ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

«ՓԱՐԱՋԱՆՈՎԸ» ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՀԱՂԹԱՐՇԱՎԸ

Սերժ Ավետիքյանի «Փարաջանով» ֆիլմն անցնելու մեծ ճանապարհ ունի: Ֆիլմը տարեվերջին կհայտնվի ֆրանսիական կինովարձույթում:

«Երբեք ոչ մի ֆիլմ չի նկարահանվում հաղթանակների համար, որովհետեւ եթե նկարահանումների ընթացքում այդ մասին ես մտածում, ապա ֆիլմ չես նկարում, ուրեմն ինչ-որ այլ բանով ես զբաղված: Ես զգում էի, որ ինչ-որ բան ճիշտ է հնչում, ինչ-որ բան մեզ հետ էր: Հենց ինքը՝ Փարաջանովը: Դերից չվախեցա, մտածեցի, որ ոչ մի տնազ, ոչ մի պատճենում չպետք է արվեր: Ես պետք է նմանվեի Փարաջանովին, բայց պետք է իմ մեջ տեղ թողնեի, որ նա տեղավորվեր իմ մեջ: Պետք է թողնել, որ կերպարն ինքն աշխատի քո մեջ: Դա մեծ ռիսկ է»,- նշեց ֆիլմի ռեժիսոր եւ Սերգեյ Փարաջանովի դերակատար Սերժ Ավետիքյանը:

Ռեժիսոր եւ դերասան Սերժ Ավետիքյանի «Փարաջանով» ֆիլմն այս տարվա «Հայակ» մրցանակաբաշխության ֆավորիտն էր: Կինոնկարը ստացավ 4 մրցանակ՝ հաղթելով «Լավագույն խաղարկային ֆիլմ», «Լավագույն ռեժիսոր», «Լավագույն դերասան», «Լավագույն նկարիչ» անվանակարգերում:

«ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2014»

ՀԱՋՈՐԴ ՓԱՌԱՏՈՆԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ

«Եվրատեսիլ-2014» համաեվրոպական երգի մրցույթի եզրափակիչ փուլում առաջին տեղը զբաղեցրեց Ավստրիայի ներկայացուցիչ Կոնչիտա Վյուրստը իր «Rise Like a Phoenix» երգով: Մրցույթի շրջանակում՝ «Ավստրայի թագուհի» տիտղոսին արժանացած մասնակիցը հավաքեց 290 միավոր:

Եզրափակիչ փուլում Հայաստանի պատվիրակ Արամ MP3-ի «Not alone» երգը ապահովեց նրա համար 4-րդ հորիզոնականը՝ 174 միավորով: Արամի երգին ամենաբարձր մրավորները տվեցին հետեւյալ երկրները, Ավստրիան՝ 12, Ռուսաստանը՝ 8, Նիդերլանդները՝ 7, Ռումինան՝ 8, Ֆրանսիան՝ 12, Լատվիան՝ 10, Ուկրաինան՝ 10, Վրաստանը՝ 12: «Եվրատեսիլ»-ում մեր երկրի գրանցած լավագույն ցուցանիշը 2008 թվականին էր, երբ երգչուհի Սիրուշոն գրավեց 4-րդ հորիզոնականը: Արամ Mp3-ը կրկնեց այդ հաջողությունը:

Կոպենհագենի B&W Hallerne համերգասրահում «Join Us» (միացե՛ք մեզ) կարգախոսի ներքո անցկացվող երգի մրցույթի լավագույն հնգյակում հայտնվեցին նաեւ Շվեդիան, Նիդերլանդները եւ Հունգարիան:

Մրցույթի եզրափակիչին մասնակցում էր 26 երկիր՝ Ուկրաինան, Բելառուսը, Ադրբեջանը, Իսլանդիան, Նորվեգիան, Ռումինիան, Հայաստանը, Մոնտենեգրոն, Լեհաստանը, Հունաստանը, Ավստրիան, Գերմանիան, Շվեդիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Իտալիան, Սլովենիան, Ֆինլանդիան, Հունաստանը, Շվեյցարիան, Հունգարիան, Մալթան, Դանիան, Նիդերլանդները, Սան Մարինոն եւ Միացյալ Թագավորությունը:

Ցավոք, փառատոնին Վրաստանը ներկայացնող Մարիկո էբրալիձեն եւ «THE SHIN» ջազային խումբը չկարողացավ հաղթահարել կիսաեզրափակիչի արգելագիծը եւ դուրս մնաց պայքարից:

ՍՊՈՐՏ



ԹԲԻԼԻՍՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐԱՐԱՏ ՍԱՅԱԴՅԱՆԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ

Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Արարատ Սայադյանը այկիդո մարզաձեւում, Վրաստանի հավաքականի կազմում Բելգիայի Անտվերպեն քաղաքում մասնակցեց եվրոպայի ակումբային առաջնությանը:

Ինչպես տեղեկացրեց Վրաստանի այկիդո մարզաձեւի հավաքականի ղեկավար Վախթանգ Սիխարուլիձեն, հավաքականն իր ակտիվում գրանցեց 2 ոսկի, 4 արծաթ եւ 2 բրոնզե մեդալներ, ընդ որում ոսկյա մեդալներից մեկը նվաճեց Արարատը: Նշենք, որ Արարատն առաջին անգամ մասնակցեց Եվրոպայի առաջնությանը եւ դարձավ Եվրոպայի չեմպիոն:

ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԷԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԿԱՆ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների վարկանիշային հերթական աղյուսակը: Նախորդի համեմատությամբ՝ աղյուսակում էական փոփոխություններ չեն գրանցվել: Վրաստանի հավաքականը շարունակում է զբաղեցնել 103-րդ, իսկ Հայաստանի ազգային ընտրանին՝ 33-րդ հորիզոնականը:

Դասակարգման նոր աղյուսակի առաջին եռյակում կրկին փոփոխություն չկա: Առաջին տեղում Իսպանիայի հավաքականն է, երկրորդ եւ երրորդ տեղերը հաջորդաբար զբաղեցնում են Գերմանիայի եւ Պորտուգալիայի ընտրանիները: Լավագույն տասնյակում ընդգրկված են նաեւ Բրազիլիայի, Կոլումբիայի, Ուրուգվայի, Արգենտինայի, Շվեյցարիայի, Իտալիայի եւ Հունաստանի հավաքականները:

ՎՐԱՍՏԱՆԻ ՉԵՄՊԻՈՆԸ ԹԲԻԼԻՍԻԻ «ԴԻՆԱՄՈՆ» Է, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԻՆԸ՝ ԵՐԵՎԱՆԻ «ԲԱՆԱՆՑԸ»

Թբիլիսիի «Դինամոն» 15-րդ անգամ նվաճեց երկրի չեմպիոնի կոչումը: Առաջնության արծաթե մեդալակիր դարձավ «Ձեստափոնին», իսկ երրորդ տեղը զբաղեցրեց Բոլնիսիի «Սիոնին»:

Ինչ վերաբերում է Հայաստանի ֆուտբոլի բարձրագույն խմբի 2013-14 թվականների մրցաշրջանին, ապա չեմպիոնի կոչումը նվաճեց Երեւանի «Բանանց»-ը:

Առանջության աղյուսակի երկրորդ եւ երրորդ տեղերը զբաղեցրեցին «Շիրակ»-ը եւ «Միկա»-ն:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Մաքուր, ջինջ, անաղարտ, վճիտ: 8.Սերենադ, գովերգ, ձոն: 10.Հայ անվանի նկարիչ Մինաս Ավետիսյանի հիմնական ոճը: 12.Մայրք ...: 13.Քաղաք Վրաստանում: 14.Էկոնոմիստ: 19.Ֆրանսիայի նախկին նախագահ ... Սարկոզի: 20.Թբիլիսահայ դրամատուրգ Գ.Սունդուկյանի հերոսուհիներից: 21.Ա.Պուշկին «Բախչիսարայի ...ը»: 24.Մանկական հիվանդություն: 25.Թատրոնի աշխատող: 26.Նույն ցեղին պատկանող: 27.Ապուշ կտրած: 32.Գրող, «Վրաստան» թերթի նախկին թղթակից ... Սեւունի: 34.Ժիր, ուրախ, աշխույժ: 35.Զրուցակից, մյուս խոսողը: 39.Անգործ, անաշխատանք: 41.Այցի գնացող, հաճախորդ: 42.Չորրորդ մաս: 43.Գետի մաս: 46.Հայկական ժողովրդական երգ «... աղջիկ»: 47.Քաղաք Իտալիայում:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Անգութ, անխիղճ: 2.Համո Սահյանի բանաստեղծություններից: 3.Կետադրական նշան: 4.Արեւ, արեգ:: 7.Խնայել, տնտեսում անել: 8.Մաքսակետ, սահմանակետ: 9.Հայ մանրանկարիչ ... Պիծակ: 11.Ձիերի խումբ: 15.Ձոհը մատուցելու տեղ: 16.Պետություն Ասիայում (նախկին Բիրման): 17.Թբիլիսահայ կինոռեժիսոր Սերգեյ ...: 18.Հայերեն ... բառարան: 22.ՌԴ նախագահ Վլադիմիր ...: 23.Վան, Տոսպ, Երվանդավան: 28. ... եւ բազմամյա բույսեր: 29.Վերցվածի հականիշը: 30.Արաքս գետի անվանումներից: 31.Հրվանդան Կրետե կղզում: 33. ... տալ, զարգանալ: 36.Նոր ելած, նոր ծնված: 37.... եւ ներքին: 38.Ավազակ, թալանչի: 40.Թբիլիսիում ծնված հայ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի հայտնի բալետը: 44.Հայերենի ժխտական նախածանց: 45.Լծկան անասուն:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Նջամենա: 7.Քենակալ: 9.Կոկտեյլ: 10.Ոգեշունչ: 13.Ոպեներ: 16.Տարա: 18.Նինա: 20.Ամեոբա: 23.Ալվան: 25.Մուգ: 27.Դարան: 28.Կեմենի: 29.Տկլոր: 31.Գեշ: 32.Կուտի: 35.Վոլոստ: 36.Լուրթ: 37.Ոսկի: 38.Համ: 41.Ազոխ: 43.Մակետ: 46.Բնիկ: 47.Ֆուձիյամա: 48.Ամիր: 49.Տիպիկ: 50.Թան: 51.Լիգ: 52.Սաստ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Անկապ: 3.Եղեռն: 4.Աքլոր: 5.Անգետ: 6.Շլաչ: 8.Կյուրի: 9.Կարկանդակ: 11.Շանք: 12.Նան: 14.Եմո: 15.Եռալ: 17.Իսակով: 19.Արգիշտի: 21.Եփրատ: 22.Բանտ: 24.Ներողամիտ: 25.Մեգով: 26.Ունես: 30.Կարտոֆիլ: 33.Ուբսունուբ: 34.Իլիական: 39.Մայիս: 40.Դեմիս: 42.Խուրի: 44.Կապա: 45.Տակտ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445